

---

---

## ԱԿԱՆԱՎՈՐ ՎԻՄԱԳՐԱԳԵՏԸ

ԳՐԻԳՈՐՅԱՆ Գ. Մ.



Ականավոր վիմագրագետ, հնագետ-պատմաբան Սեդրակ Գևորգի Բարխուդարյանը (1898-1970թթ.) ծնվել է Իրանի Մալմաստ գավառի Հավթվան գյուղում: Ընտանիքով տեղափոխվելով Երևան՝ ընդունվել և 1928 թ. ավարտել է պետական համալսարանի պատմագրական ֆակուլտետը:

1932-1937 թթ. ղեկավարել է մի շարք գիտական արշավախմբեր: Ստեղծագործական բուն տարիների նախաշեմին մեղադրվելով ազգայնականության մեջ՝ 17 տարի տառապել է ստալինյան աքսորավայրերում:

Գիտական գործունեության սկզբնական շրջանում Ս. Բարխուդարյանը հրապուրվել է Հայաստանի վաղ շրջանի պատմության և ուրարտագիտության հիմնահարցերով: Նրա «Վելիքուխի երկիրը» (1935 թ.) գիրքն ուրարտագիտական առաջին շահեկան ուսումնասիրություններից է: Սակայն շուտով Ս. Բարխուդարյանի հետաքրքրությունների առանցքը դարձավ վիմագրագիտությունը, որին անմնացորդ նվիրվեց մինչև իր կյանքի մայրամուտը:

Վիմական բնագրերը՝ հայոց այդ «քարակերտ մատյանները», մեր ազգային մշակույթի անբեկանելի մասն են: Առանց դրանց՝ թերի պատկերացում կունենայինք միջնադարյան Հայաստանի տնտեսական, հասարակական, քաղաքական ու իրավական հարաբերությունների, սոցիալական շերտավորման, հարկերի ու տուրքերի գանձման եղանակների ու ձևերի և երկրի ներքին կյանքի այլ բնագավառների մասին<sup>1</sup>:

Ս. Բարխուդարյանի կարծիքով՝ վիմագրերի պատմագիտական արժեքն առաջինը կարևորել է պատմահայր Մովսես Խորենացին, որին ծանոթ են եղել ոչ միայն հունարեն և ասորերեն, այլև արամեերեն արձանագրությունները: Ավելացնենք, որ պատմիչ Եղիշեն իր «Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին» երկում, խոսելով Ավարայրի ճակատամարտում նահատակված հայորդիների մասին, գրում է, թե ինչպես պատերազմից հետո «*Բազում արձանք էին կանգնեալ յանուն նոցա և անունք իւրաքանչիւր նշանակեալ ի նոսա*»<sup>2</sup>:

Հայկական արձանագրությունները գիտական Corpus - ժողովածուներով հրատարակելու մտահղացումը պատկանում է Ն. Մառին: Դեռևս 1879 թ. նա խնդիր

---

<sup>1</sup> *Մանանդյան Հ.*, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. 3, Ե., 1952, էջ 147, 161, 176:

<sup>2</sup> *Եղիշեի Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին*, Ե., 1957, էջ 203:

դրեց հավաքել և տպագրության պատրաստել Կովկասի տարածքում եղած հայերեն, վրացերեն, հունարեն և եբրայերեն մինչև XII դարն ընդգրկող վիմագրերը: Հայկական արձանագրությունների ժողովածուն կազմելն առաջարկվեց Մկրտիչ Էմինին: Սակայն նա կարողացավ պատրաստել միայն Կարսի, Անիի և նրա շրջակայքի վիմագրերի ժողովածուն, որը հրատարակվեց 1881 թ. Մոսկվայում: Այդ աշխատանքը, Ս. Բարխուդարյանի խոսքերով ասած, «*հեռու էր հայերեն Դիվան–Curpus կոչվելուց*»<sup>3</sup>:

1892 թ. Ն. Մառի գլխավորությամբ սկսվեցին Անիի պեղումները, որոնց Հ. Օրբելին մասնակցեց միայն 1906 թ.: Ապագա մեծ արևելագետի պատվի գործը եղավ Անիի արձանագրությունների ժողովածուն կազմելու աշխատանքը, որը կատարվեց ամենայն բարեխղճությամբ: Խրիմյան Հայրիկի հորդորանքով փորձեց **Curpus** կազմել Կարապետ Բասմաջյանը, որի արդյունքը եղավ Անիի, Բագնայրի և Մարմաշենի արձանագրությունների հավաքածուն, որը ֆրանսերեն հրատարակվեց միայն 1931 թ.: Այս գործին խանդավառությամբ ձեռնամուխ եղան Երվանդ Լալայանը (1910-1912 թթ.) և Հր. Աճառյանը, որի ձեռագիր «Հայարձանը» առ այսօր անտիպ մնում է նրա անձնական արխիվում:

1913 թ. Ս. Պետերբուրգում Ն. Մառի ռուսերեն առաջաբանով լույս տեսավ հայագետ Կ. Կոստանյանի կազմած «Վիմական տարեգիրը», որտեղ ժամանակագրական կարգով ամփոփված են 1328 թ. արձանագրություններ: Ճիշտ է, երկար տարիներ սա դարձավ հայագետների սեղանի գիրքը, սակայն, այնուամենայնիվ, հեռու էր **Curpus** լինելու գաղափարից: Ո՞րն էր դրա պատճառը: Պատասխանները տալիս է Ս. Բարխուդարյանը. 1) նախորդ վերծանողները մասնագետներ չեն եղել. 2) վիմագրերը համարելով կարևոր և ոչ կարևոր՝ հավաքել են հեշտ ընթեռնելի բնագրերը. 3) վերծանելիս կամ ընթորինակելիս չեն պահպանվել արձանագրությունների հնագրական, ուղղագրական-քերականական առանձնահատկությունները, կատարել են անհարկի ուղղումներ և սրբագրումներ. 4) չեն օգտագործվել տեխնիկական միջոցներ (բացակայում են լուսանկարները, գրչագրերը և էստամպածային կրկնօրինակումները)<sup>4</sup>:

Ս. Բարխուդարյանը կարևորում էր առանձին վանական եղբայրություններում պահպանվող մատյան «Քոթուկները», որոնցում, իբրև կանոն, ընթորինակվում էին պաշտամունքային կառույցների պատերին եղած վիմագրերը, քանզի դարերի ընթացքում բնագրերը քայքայվում էին և իսպառ ոչնչանում, իսկ վանական մատյաններում մնում էին անխաթար:

Ս. Բարխուդարյանը պահանջում էր վերծանելիս պահպանել Հ. Օրբելու մշակած սկզբունքները և պայմանական նշանները (զծիկ, կախման կետեր, կիսափակագծեր, մեծ փակագծեր, տողատման կամ բառանջատման նշան), որոնք ցայսօր ընդունում են բոլոր վիմագրագետները: Առանձին կարևորություն ունի բնագրի և վերծանության նույնականության սկզբունքը: Այս ամենի մասին Ս. Բարխուդարյանը խոսում է «Դիվանի» I պրակում զետեղված «Հայկական

<sup>3</sup> Դիվան հայ վիմագրության, պրակ I, կազմեց Հ. Օրբելի, Ե., 1966, էջ XXIV:

<sup>4</sup> Դիվան հայ վիմագրության, պրակ I, էջ XXII :

վիմագրություն» խորագիրը կրող առաջաբանում, որը, ըստ էության, համալրում էր Հ. Օրբելու 1914 թ. Պետերբուրգի կայսերական համալսարանում կարդացած դասախոսության վիմագրագիտական դրույթները<sup>5</sup>:

Ս. Բարխուդարյանը բարձր էր գնահատում հայ առաջին վիմագրագետներ Ստեփանոս Օրբելյանի (XIII դ.), Ջաքարիա Քանաքեռցու (XVII դ.), ապա նաև Մ. Բժշկյանի, Հ. Շահխաթունյանցի, Ս. Ջալալյանցի, Ս. Բարխուդարյանի, Ս. Սմբատյանցի, Քաջբերունու, Քուչուկ-Հովհաննիսյանի, Ե. Լալայանի և այլոց ծառայությունը, մատնանշում էր Ներսես Աշտարակեցու հայրապետական հոգատարությունը հայկական վիմագրերի նկատմամբ:

*Միայն պետականություն ունեցող ժողովուրդը կարող է Դիվանի մատենաշար հրատարակել*, - ասում էր Ս. Բարխուդարյանը:

1938 թ. օգոստոսի 20-ին Հայաստանի ժողովուրդի ակադեմիկոս Հ. Օրբելու զեկուցագրի հիման վրա որոշում ընդունեց կազմակերպելու վիմագրագիտական արշավախումբ՝ Խորհրդային Հայաստանի տարածքում եղած վիմագրերը գիտական հիմունքներով ընդօրինակելու, վերծանելու և տպագրության պատրաստելու նպատակով: Մակայն վերահաս Երկրորդ համաշխարհային պատերազմը և Աշխարհբեկ Քալանթարի ու Ս. Բարխուդարյանի ձեռքակալություններն ի չիք դարձրեցին այդ ծրագրերի իրականացումը<sup>6</sup>: Աշխարհբեկ Քալանթարը գնդակահարվեց բանտում, իսկ Ս. Բարխուդարյանը Երևան վերադարձավ միայն 1953 թ.՝ Ստալինի մահից հետո:

Տառապանքի ճամփան անցած գիտնականին նեցուկ կանգնեցին Հ. Օրբելին, Կ. Ղաֆադարյանը և Բ. Առաքելյանը, որի ջանքերի գնով 1959 թ. հիմնադրվեցին ԳԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտը և դրա կազմում վիմագրության բաժինը՝ Ս. Բարխուդարյանի գլխավորությամբ: Վիմագրագետ կադրերի ընտրության և պատրաստման հարցը լուծվելու էր տարիների ընթացքում:

Այսպիսով, սկսվեցին «Դիվան հայ վիմագրության» մատենաշարի կազմման և հրատարակման աշխատանքները: Մինչև առանձին պրակներին անդրադառնալը նշենք, որ Ս. Բարխուդարյանն առանձնապես կարևորում էր Գ. Հովսեփյանի և Կ. Ղաֆադարյանի անուրանալի վաստակը վիմագրագիտության մեջ, սակայն ճշմարտության դեմ չմեղանչելու համար արձանագրենք, որ «Դիվան հայ վիմագրության» մատենաշարի փաստական սկզբնավորողը և հիմնադիրը եղել է հայագիտության նվիրյալ Ս. Բարխուդարյանը: Մատենաշարի լույսընծայումը, հիրավի, երևույթ էր հայագիտության ասպարեզում:

«Դիվանի» I պրակը լույս տեսավ II-ից վեց տարի հետո միայն՝ 1966 թ., Հ. Օրբելու ձեռագիր օրինակի անսպասելի կորստյան պատճառով: Այստեղ ամփոփված են Անի մայրաքաղաքի և նրա շրջակայքի թվով 266 արձանագրություններ: Պրակն աչքի է ընկնում ոչ միայն կազմողի՝ Հ. Օրբելու բժախնդիր աշխատանքով, այլև արվեստագետ-լուսանկարիչ Արամ Վրույրի բարձրորակ լուսապատկերներով: Առանց այս ժողովածուի աղոտ պատկերացում կունենայինք Բագրա-

<sup>5</sup> Դիվան հայ վիմագրության, պրակ I, էջ XV :

<sup>6</sup> Գրիգորյան Գր., Հայկական վիմագրություն, Ե., 2000, էջ 29-32:

տունյաց մայրաքաղաքի պատմամշակութային արժեքների մասին: Ցավոք, հայ մասնագետները դեռևս իրավունք չունեն մասնակցելու հայոց միջնադարյան մայրաքաղաքի հնագիտական ուսումնասիրություններին: Անիի պրակում զետեղված են Հ. Օրբելու և Ս. Բարխուդարյանի դասընթացային ներածականները:

«Դիվանի» II պրակը Ս. Բարխուդարյանի աշխատասիրությամբ տպագրվեց 1960 թ.: Նրանում զետեղված են 421 արձանագրություններ պատմական Սյունիքի Ծղուկ (Միսիանի ենթամարզ), Հաբանդ (Գորիսի ենթամարզ), Բաղք-Ձորք, Քաշունիք և Կովսական (Կապանի ենթամարզ) գավառներից: Չանգեզուրյան պրակից դուրս է մնացել Արևիք գավառը (Մեղրու ենթամարզ), որն առաջիկայում կհամալրի Աշոտ Մանուչարյանը: Պրակում առանձին կարևորություն են ներկայացնում Տաթևի, Որոտնավանքի, Սյունի վանքի, Բղենո Նորավանքի, Վահանավանքի և պատմաճարտարապետական այլ հուշարձանների վիմագրեր, որոնք ստույգ տեղեկություններ են տալիս Սյունիքի թագավորների, իշխանական ընտանիքների, ժողովրդի սոցիալական կացության և հասարակական կյանքի ամենատարբեր ոլորտների մասին:

Ս. Բարխուդարյանի վիմագրագիտական աշխատանքների մեջ հատկապես կարևորվում է «Դիվանի»՝ 1967 թ. լույս տեսած III պրակը, որտեղ հավաքված են 813 արձանագրություններ Վայոց Ձորի մարզի (Եղեգնաձորի և Վայքի ենթամարզեր) տարածքից: Այստեղ առավել կարևորվում են Ամաղուի Նորավանքի, Ցաղաց քարի, Արատեսի, Թանահատի, Քարկոփի վանքերի և այլ հուշարձանախմբերի վիմական բնագրեր: Այս պրակում զետեղված արձանագրություններում հավաստի վկայություններ կան Հայաստանը սելջուկ թուրքերից ազատագրելու, Պռոշյան (Խաղբակյան) և Օրբելյան տոհմերի՝ Սյունիքում հաստատվելու, լեռնաշխարհի հին ազնվական ընտանիքների վերագարթոնքի (Մահևանյաններ, Հասան-Համտույաններ, Շահուռնեցիներ և այլն), հարկերի ու տուրքերի, նվիրատվությունների, շինարարական աշխատանքների և հոգևոր դասի ներկայացուցիչների մասին:

Ս. Բարխուդարյանի կազմած պրակների ցանկում ակնառու տեղ է զբաղեցնում չորրորդը, որը լույս ընծայվեց 1973 թ. նրա աշակերտների ջանքերով: Այն պարունակում է թվով 1547 վիմագրեր Սյունիքի Գեղարքունիք և Սողք (այժմյան Գեղարքունիքի մարզի Մարտունու, Գավառի, Վարդենիսի ենթամարզերը) գավառներից: Այս պրակը շահեկան է այն իմաստով, որ քարակերտ այս վկա-յագրերում առատ տեղեկություններ են պահպանվել իշխանական-մելիքական տների, քանդակագարդող վարպետների և սոցիալական ոլորտի ամենատարբեր հարցերի մասին: Վիմագրական տեղեկություններով հստակեցվում է ազգաբնակչության միգրացիոն պատկերը:

Ակադեմիկոս Բ. Առաքելյանի խմբագրությամբ 1982 թ. լույս տեսավ Ս. Բարխուդարյանի և նրա աշակերտների կազմած V պրակը, որտեղ զետեղված էին Արցախի նահանգի IX-XVIII դարերն ընդգրկող 1071 արձանագրություններ: Այս պրակը պետք է լույս տեսներ շատ ավելի վաղ՝ Հայաստանի և Ադրբեջանի ակադեմիաների տիտղոսաթերթերով, սակայն Արցախի տարածքում ադրբեջանցի մասնագետները, բացի շուրջ 50 արաբատառ պարսկերեն տապանագրերից,

ադրբեջանական ոչինչ չգտնելով՝ սկսեցին տրտնջալ: Միացյալ արշավախմբի ընդհանուր ղեկավարը Ս. Բարխուդարյանն էր, նրա տեղակալը՝ ադրբեջանական խմբի ավագ Մեշեդի Խանում Նեյմատովան: Եվ ահա հարևան հանրապետության մասնագետները հրաժարվեցին մասնակցել հետագա համատեղ արշավախմբին, որի ծրագրում նախատեսված էր ուսումնասիրել նաև Նախիջևանի ԻՅ տարածքը: Ադրբեջանական գործընկերներն ստիպված էին անսալ իրենց քաղաքական առաջնորդներին և, նրանց կարգադրությամբ տարբեր պատրվակներ հորինելով (ֆինանսների բացակայություն, հիվանդություն և այլն), փաստորեն, ձախողեցին միացյալ արշավախմբի աշխատանքները: Սակայն մենք այսօր, շնորհիվ վիմագրության բաժնի ավագ գիտաշխատող Ա. Այվազյանի մեծ ջանքերի, ունենք Նախիջևանի տարածքի ամբողջ վիմագրագիտական ատաղձը և պատրաստում ենք տպագրության անհրաժեշտ գիտական ապարատով: Այս ամենից հետո, հասկանալի է, V պրակը պետք է լույս տեսներ միայն Հայաստանի գիտությունների ակադեմիայի տիտղոսաթերթով: Սակայն պահպանելով գիտական էթիկայի կանոնները՝ գրքի առաջաբանում նշվեց, որ Արցախի վիմագրերի հավաքման աշխատանքներին ադրբեջանական կողմից մասնակցել են Մեշեդի Խանում Նեյմատովան, Յու. Յուսիֆովը, Հյուսեին Ջիդդին և այլք: Արցախի պրակի կազմման աշխատանքներին հայկական կողմից մասնակցել են Ս. Ավազյանը, Գր. Գրիգորյանը, Գր. Կարախանյանը և Ա. Մանուչարյանը: Լուսանկարչական աշխատանքները կատարել են Ա. Վրույրը և Ա. Շահինյանը: Հավաքչական աշխատանքները տևեցին չորս տարի (1960-1964 թթ.):

Միացյալ արշավախումբն ուսումնասիրեց Լեռնային Ղարաբաղի Մարտակերտի, Ստեփանակերտի (Ասկերանի), Մարտունու, Հադրութի, Շուշիի, ինչպես նաև Քելբաջարի (Քարվաճառի), Խանլարի, Գետաբեկի և հարակից շրջանները: Հինգերորդ պրակն ուներ ընդարձակ առաջաբան, որտեղ Ս. Բարխուդարյանը կարծիք է հայտնում Դերբենդի հայ-աղվանական թագավորության գոյության մասին, սակայն նպատակահարմար գտնվեց այն հրատարակել առանձին գրքույկով:

Ս. Բարխուդարյանի՝ վիմագրերին առնչվող գիտական աշխատանքների ցանկում առանձնակի տեղ է զբաղեցնում «Միջնադարյան հայ ճարտարապետներ և քարգործ վարպետներ» մենագրությունը, որը լույս տեսավ 1963 թ.: Այն, փաստորեն, մեծ վիմագրագետի թեկնածուական թեզն էր, որը, Հ. Օրբելու գրավոր կարծիքի համաձայն, ոչնչով չէր զիջում դոկտորականին: Այստեղ հեղինակը վերհանում է անհայտ մնացած 70 ճարտարապետների (մինչև XVII դ.), 130 քանդակագործող վարպետների և 49 վիմագիր գրիչների անունները՝ նշելով նրանց դերը ճարտարապետության և արվեստի պատմության մեջ: Բացի այդ, հեղինակը քննարկել է մի շարք եզրույթների իմաստային նշանակությունը:

Այսօր ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի վիմագրության բաժնի աշխատակիցները զբաղված են Ս. Բարխուդարյանի ձեռագիր ժառանգության կարգավորման և տպագրության պատրաստելու խնդիրներով: Ավարտին է մոտենում Հյուսիսային Հայաստանի վիմագրերի պրակը, որտեղ ամփոփված են Լոռու և մասամբ Տավուշի մարզերի շուրջ 1000 արձանագրություններ:

Ս. Բարխուդարյանի ձեռագիր ժառանգության մասն է կազմում Շիրակի արձանագրությունների թերակատար պրակը, որը կարող է համալրման և հրատարակման:

Մեծանուն վիմագրագետի երազանքն էր հավաքված և տպագրված տեսնել նաև հայ գաղթավայրերի վիմական արձանագրությունների լիակատար ժողովածուները: Բարեբախտաբար, տպագրվել են Վրաստանի (Պ. Մուրադյան), Կուրի ձախափնյակի (Ս. Կարապետյան), Ուկրաինայի, Մոլդովայի և Ռուսաստանի Դաշնության (Գր. Գրիգորյան) արձանագրական նյութերը:

«Արձանագրությունների հավաքման աշխատանքները,- գրում էր Ս. Բարխուդարյանը,- կապված են երկարատև և ծանր ճամփորդությունների ու նյութական զգալի միջոցների հետ»<sup>7</sup>: Ցավոք, այսօր մենք զրկված ենք և՛ «ճամփորդություններից», և՛ «զգալի միջոցներից»... Իսկ մեր «քարե մատյանները» մեր աչքի առջև, մեր աչքից հեռու օրեցօր եղծվում, քայքայվում և ոչնչանում են՝ կորցնելով իրենց վերձանության հավաստիությունը և պատմամշակութային արժեքը: Ժամանակն է վերականգնելու հավաքչական աշխատանքների բարխուդարյանական ավանդույթները: Հիրավի, այս մասին պետք է մտածել:

## ИЗВЕСТНЫЙ ЭПИГРАФИСТ

ГРИГОРЯН Г. М.

### Резюме

Видный армянский эпиграфист Седрак Геворкович Бархударян (1898-1970) родился в Иране. В 1928 г. окончил исторический факультет Ереванского государственного университета. В 1932-1937 гг. руководил археологическими экспедициями, затем был репрессирован и 17 лет провел в ссылке. В 1953 году, после реабилитации, вновь приступил к научной работе.

Среди многочисленных его трудов по арменоведению особое место занимают составленные им „Своды армянских надписей“ (т. II, 1960, т. III, 1967, т. IV, 1973, т. V, 1982), где собраны и расшифрованы тысячи надписей Сюника, Вайоц дзора, Гехаркуника и Арцаха.

<sup>7</sup> Դիվան հայ վիմագրության, պրակ I, էջ XXI: